Այս տետրը պատկանում է



# Սովորել Աննա Ֆրանկի հետ

Աշխատանքային տետր 1

Այս աշխատանքային տետրի բոլոր վարժությունները նշան են կրում: Նշանը քեզ հուշում է՝ ինչ պետք է անել: Նշանը միշտ էջի վերևի ձախ անկյունում է:





Այս նշանը ցույց է տալիս, որ պետք է գրել կամ նկարել:



Երբ այս նշանն ես տեսնում, նշանակում է, որ պետք է տեքստ կարդալ:

# Բարև:

Այս աշխատանքային տետրը քեզ շատ բան կսովորեցնի Աննը Ֆրանկի մասին: Աննը Ֆրանկը հրեա աղջիկ է:
Իր ծննդյան տասներեքերորդ տարեդարձին նա նվեր է ստանում մի օրագիր: Աննըն շատ է սիրում կարդալ ու գրել: Իր օրագրում նա գրում է այն ամենը, ինչ կարևոր է համարում:
Ուզո՞ւմ ես ավելի շատ իմանալ Աննըի կյանքի մասին: Աննը ֆրանկի կյանքի մասին կարդա՛ ցուցահանդեսի տախտակներում:
Կատարիր այս աշխատանքային տետրի բոլոր առաջադրանքները, և վերջում քեզ հաճելի անակնկալ կսպասվի:

## Հաջողություն:

# Աննը Ֆրանկի կյանքը

1

1929 թվականի հունիսի 12-ին

................................

................................

................................

**Սկսի՛ր այստեղ>>**
**Փնտրի՛ր տարեթվերը ցուցահանդեսում: Յուրաքանչյուր տարեթվի մոտ գրիր այն, ինչ պատահել է այդ տարի.**




Երբ Աննըն համարյա չորս տարեկան է, Հիտլերը գալիս է իշխանության: Ֆրանկերը որոշում են

......................

......................

......................

Հուլիսի 6-ին Ֆրանկերի ընտանիքը թաքնվում է Ամստերդամի Պրինսենխրախտ փողոցի վրա գտնվող հասցեում: Այստեղ Ֆրանկերը անց են կացնում ավելի քան ..... տարի:

1940 թվականի մայիսի 10-ին

..............................

..............................

..............................

..............................

Երբ գերմանացիները ներխուժում են Լեհաստան, Անգլիան ու Ֆրանսիան հայտարարում են

...........................

...........................

...........................

# Երկու տարի շարունակ թաքնվելով Հետնատանը



*Հետնատուն մտնելուց երեք օր հետո, Աննըն շարունակում է գրել իր օրագիրը: Պատմելու շատ բան ունի: Գրում է՝ Այնքան շատ բան է պատահել,ասես աշխարհը շուռ է եկել հանկարծ:»*

Ուրիշ մի ընտանիք ապահով տեղ է փնտրում: Նրանց անուններն են՝ Հերման և Աուգյուստ վան Պելս, և նրանց որդի՝ Պետեր:







Սա Ֆրից Պֆեֆֆերն է: Նա Ֆրանկերի ու վան Պելսերի ընտանիքների ընկեր է: Նա նույնպես ստիպված է թաքնվել: Մի սենյակ է կիսում է Աննըի հետ: Դա Աննըի դուրը չի գալիս: Ախր, սենյակը շա՜տ փոքր է:







Դու ի՞նչ կանեիր, եթե ցերեկները պիտի սուս մնայիր: Եթե ցերեկները միայն շշուկով պիտի խոսեիր, և համարյա չպիտի քայլեիր: Այս վանդակներում նկարի՛ր կամ գրի՛ր երեք իր, որ դու հետդ կվերցնեիր Հետնատուն:



# Կարդալ և գրել Հետնատանը

3



Միպ Խիս



Բեպ Վոսկայլ



Յոհաննես Կլեյման



Վիկտոր Կուգլեր





1943 թվականի ամռանը Աննըն սկսում է շատ սիրել գրել: Սկսում է գրել պատմվածքներ: Երբեմն հորինում է, բայց նաև գրում է այն մասին, ինչ պատահում է Հետնատանը:

1943 թվականի աշնանը Աննըն հաճախ մռայլ է: Ախր, ե՞րբ պիտի ավարտվի պատերազմը վերջապես:

Օտտոյի աշխատակիցները օգնում են թաքստոցայիններին: Հետնատուն են բերում սնունդ և երբեմն էլ գրքեր ու ամսագրեր:

Օգնողներից որո՞նք են գրքեր բերում Հետնատուն:

Աննըն շատ է սիրում կարդալ: Հետնատանը նա շատ-շատ գրքեր է կարդում: Երբեմն օրագրում գրում է իր կարդացած գրքերի մասին:




Օտտոն Աննըին լավ գաղափար է հուշում: Ասում է, որ կարող է արտագրել գեղեցիկ նախադասություններ այն գրքերից, որ նա կարդում է: Աննըն հավանում է գաղափարն ու սկսում գրել «Սիրած Մեջբերումների նոթատետր»:





1944 թ. օգոստոսի 4-ին ոստիկանությունը մտնում է Հետնատուն և ձերբակալում բոլոր բնակիչներին: Ինչ-որ մեկը մատնել է նրանց, բայց մինչև հիմա ոչ ոք չգիտի` ո՞վ է մատնել:

# Ի՞նչ է պատահում Ֆրանկերի ընտանիքին:

Ոստիկանները բանտ են գցում Հետնատան բոլոր բնակիչներին: Աննըի օրագիրը Հետնատանն է մնում: Միպ Խիսը փրկում է Աննըի օրագիրը:

Հետևի՛ր սլաքների ուղղությունը (համար մեկից մինչև երեքը) և տե՛ս՝ ով ուր է տարվել:

1

Հետնատան բնակիչները տարվում են Վեստերբորկ ճամբար, Հոլանդիայում:

2

Վեստերբորկից գնացքով տարվում են Աուշվից-Բիրկենաու համակենտրոնացման ճամբար, Լեհաստան: Այստեղ Օտտոյին բաժանում են Աննըից, Մարգոյից ու Էդիթից:

3

Հետո, Աննըն ու Մարգոն տարվում են Բերգեն-Բելսեն համակենտրոնացման ճամբար, Գերմանիա:

1945 թ. մարտ ամսին, Աննըն մահանում է տիֆ վարակիչ հիվանդությունից: Նրա մայրն ու քույրը նույնպես են մահանում: Հետնատան բնակիչներից միայն Օտտո Ֆրանկն է վերապրում պատերազմը:

# 761 օր Հետնատանը...



Աննըն Հետնատանն է ապրում 761 օր, ավելի՛ն քան երկու տարի: Այս ժամանակամիջոցում նա գրում է իր օրագիրը, «Հետնատան հեքիաթներ» վերնագրով իր պատմվածքներն ու իր «Սիրված Մեջբերումների նոթատետրը»:
Նրա օրագրի շնորհիվ մենք գիտենք՝ ինչ է ապրել ու զգացել աղջիկը, և ինչ էր ուզում դառնալ, երբ մեծանար:



1945 թվականի մայիսի 5-ին գերմանական զորքերը հանձնվում են: Հոլանդիան ազատագրվել է: Մի քանի ամիս հետո, Երկրորդ համաշխարհային պատերազմը վերջապես ավարտված է: Երբ Օտտո Ֆրանկը վերադառնում է Ամստերդամ, Միպ Խիսը նրան հանձնում է Աննըի օրագիրը: Երկու տարի հետո Օտտոն հրատարակում է օրագիրը:




Աննը Ֆրանկն ուզում էր դառնալ գրող: Քո կարծիքով, նրա երազանքը կատարվե՞լ է:
Այստեղ գրի՛ր պատասխանդ:

..........................................................................

..........................................................................

որովհետև ............................................................

..........................................................................

..........................................................................

..........................................................................

## Աննըն միակը չէր...

Աննը Ֆրանկի պես շատ ու շատ հրեա երեխաներ կային: Ոչ բոլորն ունեին թաքնվելու տեղ: Ոչ բոլորն էին պահում օրագիր: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ վեց միլիոն մարդ սպանվել է, նրանց թվում՝ մեկ և կես միլիոն երեխա:



«Լավ է, որ գոնե կարողանում եմ գրի առնել իմ մտքերն ու զգացումները. եթե դա էլ հնարավոր չլիներ, լրիվ կխեղդվեի:»

Այսպես գրեց Աննը Ֆրանկը, 1944 թ. մարտի 16-ին:

# Աննըի ամենաթանկագին իրը

Աննըի համար ամենաթանկագին իրը իր օրագիրն է: Գրելը շատ կարևոր է Աննըի համար: Եթե մարդ չի կարող տնից դուրս գալ, և միշտ պիտի սուս մնա, գրելն իրոք օգնում է, սիրտը հովացնելու համար:

Պատկերացրո՛ւ՝ քեզ զգում ես ջղայնացած, տխուր ու միայնակ: Նման դեպքում, դու ի՞նչ կանես: Գրի՛ր այս վանդակում:

.................................................................................

.................................................................................



# Հիմա դու գրի՛ր:

Ավարտի՛ր հետևյալ նախադասությունները՝

**Ինչպե՞ս ես քեզ զգում, երբ կարդում ես:**

Երբ գիրք եմ կարդում, ..............................................

.................................................................

.................................................................




**Որտե՞ղ ես սիրում կարդալ:**

Ես սիրում եմ գիրք կարդալ (որտե՞ղ) ..............................

.................................................................

.................................................................







# Ոչ մեկ գիրք

Շուտով գրելու տեղ չէր մնացել Աննըի օրագրում: Դու գիտե՞ր, որ Աննըի օրագիրը ոչ մեկ գիրք է, այլ տարբեր նոթատետրեր և առանձին թղթեր: Աննըն գրում է նաև պատմվածքներ («Հեքիաթներ Հետնատնից»): Երբեմն նաև իր կարդացած գրքերից գեղեցիկ նախադասություններ է արտագրում իր «Սիրված մեջբերումների նոթատետրում»:





Լուն

«Նոր աղետ՝ Մուշիի լվերը: Մենք չգիտեինք, որ կատվի լվերը կարող են փոխանցվել մարդկանց. պարզվում է՝ կարող են: Երեկ մեկին բռնեցի ոտքիս վերին հատվածում, տաս րոպե հետո մի հատ էլ ավելի ներքև. և երեկոյան, երբ նստած էի Դասսելի մահճակալի վրա, ուրիշ մեկը վազվզում էր ոտքիս վրա:» Մատներիս արանքով սահեց. ախր, շա՜տ արագ են շարժվում այդ փոքրիկ էակները:

Ես դրան բռնեցի ու ..........................................................................

..........................................................................

..........................................................................

..........................................................................



# Դու ինչպե՞ս ես կարդում:



9

**Ես ընդհանրապես** կարդում եմ շշնջալով – ես բարձրաձայն եմ կարդում – ես մտքումս եմ կարդում – ես կարդում եմ փոքր եղբորս և կամ քրոջս համար



5

..............................................................................................

..............................................................................................

Դու ե՞րբ ես սիրում կարդալ:

6

..............................................................................................

..............................................................................................

## Աննըն շատ գրքեր է կարդում Հետնատանը:

## Աննըն ինքը ի՞նչ է գրել:

1 ..............................................................................

2 ..............................................................................

3 ..............................................................................





# Գնա՛ ու նստի՛ր հարմար մի տեղ, գրելու համար:

10

## Քո ամենասիրած գիրքը

Կարդալն ու գրելը կապված են իրար հետ: Եթե հաճախ կարդում ես, ինքնաբերաբար ավելի լավ էլ գրելու ես:

Շրջագծի՛ր գրքերի այն տեսակը, որ ավելի շատ ես հավանում

արկածային գրքեր

սիրո մասին գրքեր

ծիծաղելի գրքեր

սպորտի մասին գրքեր

կենդանիների մասին

տիեզերքի մասին ցրքեր

հեքիաթների գրքեր

պատմական գրքեր

սարսափ գրքեր

Կամ՝ ես չեմ կարդում գրքեր, բայց սիրում եմ կարդալ (ի՞նչ) ...........................

...............................................................................................



# Անակնկա՜լը:

**11**



1 Փնտրի՜ր այս տետրում գրածդ նախադասությունները:
Այն նախադասությունները գտնվում են 7 և 9 էջերում:
2 Նայի՜ր թանաքի բծում թաքնված համարը:
3 Արտագրի՜ր բոլոր նախադասությունները ստորև:
Ուշադրությո՜ւն՝ գրի՜ր յուրաքանչյուր նախադասությունը ճիշտ տեղում. համար 2-ի նախադասությունը երկրորդ գծի վրա, համար 8-ինախադասությունը ութերորդ գծի վրա, և այդպես շարունակ:




1 Երբ ես գիրք եմ կարդում

2 ...........................................................................................

3 ...........................................................................................

4 Երբ ես գիրք եմ կարդում

5 ...........................................................................................

6 ...........................................................................................

7 Երբ ես գիրք եմ կարդում

8 ...........................................................................................



## Սիրելի գրող,

Դու հենց նոր ռոնդո ես գրել: Ռոնդոն ութ տողից բաղկացած բանաստեղծություն է:
Արտագրի՜ր այս ութ տողերը մի առանձին թղթի վրա:

## Ծա՜տ լավ: Դու իսկական բանաստե՜ղծ ես:

*Տեքստեր*
Աննը Ֆրանկի Հիմնադրամ
Լիս Սխիպպերս
Սաննը Վերստրատը

*Իրագործում*
Յոսեֆին դը Ման
Ինգըր Սխապ

*Ձևավորում*
Յոստ Լակ
Սկեպյա, Պիտեր Մինեուր

*Լուսանկարներ*
Յիուլ Հոնդիուս

*Թարգմանություն*
Աննա Մարիա Մատտաար

*Իրավունքներ*
Աննը Ֆրանկի ընտանիքի լուսանկարներ՝ © Աննը Ֆրանկի Հիմնադրամ, Ամստերդամ/ Աննը Ֆրանկի Ֆոնդ, Բազել
Աննը Ֆրանկի գրած տեքստերը © Աննը Ֆրանկի Ֆոնդ, Բազել

© Յիուլ Հոնդիուս լուսանկարչություն